

ՆՈԹԲ ԵՒ ՆԻՇԲ

«ԱՐԱՐԱՏ» ՕՐԱԹԵՐԹԻ ՅՕԴՈՒԱԾԻՆ ԱՌԹԻԻ

Մենք մինչեւ այսօր գիտեինք թէ Հայ ձեռագրերու մագաղաթը վանքերու մէջ պատրաստուած է, մելանը եւ գրիչը Հայ վանականի ձեռքերուն մէջ հրաշալի էջեր են հիւսած եւ նկարած մագաղաթին վրայ, թէ՛ Ս. Յակոբ-եանց միաբաններու արիւնով է պաշտպանուած Հայ գրը-չագիրներու գանձատունը. գիտեինք նաև թէ Ձեռագրաց Յուցակներ հրատարակուած են եւ կը հրատարակուին, նո՛յն վանականներու տարիներու աշխատանքով, սակայն չէի՛նք գիտեր թէ անոնց սեփականութեան իրաւունքը կորսնցուցած ենք:

Արտասահմանի մէջ, մեր հայկական ձեռագիր-ներու ցուցակները^(*) տակաւին չե՛ն ունեցած մէկ հատ գնորդ ոչ իսկ նպարավաճառ-մտաւորականներուն մէջ, ունեցալու համար սեփականատէր մը, մեզմէ տարբեր:

Անյուրջ յօդուածներէ տարբեր բան մը կը սպա-սէինք «Արարատ»-էն՝ մեր վերջին այս տագնապի օրե-րուն: Նուագագոյնը որ կրնանք ըսել այն է՝ թէ յուսա-խար եղանք:

«ՍԻՈՆ»

(*) Երեսնադէմի Հայոց Պատրիարքութեան Տպարանէն ցարդ լոյս տեսած են.

ա. — «Յուցակ Հայերէն Ձեռագրաց Հալէպի Ս. Քառասուն Մանկունք Եկեղեցւոյ Եւ Մասնաւորաց», Կազմեց Արտաւազկ Աբրեղիսիայոս Սիւրճեան, 1935, ԻԲԺ 415 էջ:

բ. — «Մայր Յուցակ Ձեռագրաց Սրբոց Յակոբեանց», Բ. Հատոր: Կազմեց Նորայր Եպս. Պոպարեան, 1953, ԸԺ 295 էջ:

գ. — Նոյնին Գ. Հատորը: 1954, ԸԺ 309 էջ:

դ. — Նոյնին Դ. Հատորը: 1956, ԺԶԺ 275 էջ:

ե. — Նոյնին Ե. Հատորը: 1960, ԺԶԺ 330 էջ:

զ. — «Մայր Յուցակ Ձեռագրաց Սրբոց Յակոբեանց», Ա. Հատոր, Վերահայտած Է. ամբողջացած: Կազմեց Ն. Եպս. Պոպարեան: 1966, ԺԶԺ 676 էջ: